ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/33 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թղթապանակների և գրապահարանների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստ**

**Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 10.01.2024թ. ժամը 12:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողովի կազմը.**

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Մարաքյան

Հանձնաժողովի անդամ՝ Նազիկ Հովասափյան

Տաթև Սուքիասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Սիմոնյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | «Արգավանդ Կահույք» ՍՊԸ | - |
| 2 | «Մեգաօֆիս» ՍՊԸ | tender@megaoffice.am |
| 3 | Ա/Ձ Արման Առաքելյան | arman.araqelyan81@gmai.com |
| 4 | «ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | Gross-group23@mail.ru |
| 5 | «Հ.Սմբատ» ՍՊԸ | h.s2013@mail.ru |
| 6 | «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ | HaykLV@yandex.ru |
| 7 | «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ | Gt-autoparts@mail.ru |
| 8 | «Մեգալոգ» ՍՊԸ | - |
| 9 | «Մարիամ Սարգսյան» ԱՁ | fortender2023@mail.ru |
| 10 | «ՀԵՆՐԻ-ՇԻՆ» ՍՊԸ | henri-shin@mail.ru |
| 11 | Ա/Ձ Սարգիս Ալոյան Մանվելի | sargisaloyan287@gmail.com |
| 12 | «Օլանդա» ՍՊԸ | - |
| 13 | «ՈՐՈՏ» ՍՊԸ | - |

**3" Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3"1 Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Մասնակիցների առաջարկած գները.**

4.1. Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | Վերջնական Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 850000 | «Արգավանդ Կահույք» ՍՊԸ | 642000 | 770400 |
| | | «Մեգաօֆիս» ՍՊԸ | 650000 | 780000 |
| | | Ա/Ձ Արման Առաքելյան | 850000 | 1020000 |
| | | «ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 850000 | 1020000 |
| | | «Հ.Սմբատ» ՍՊԸ | 5000000 | 5000000 |
| | | «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ | 300000000 | 360000000 |
| 2 | 6400000 | «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ | 2344000 | 2812800 |
| | | «Մեգալոգ» ՍՊԸ | 2396000 | 2875200 |
| | | «Մարիամ Սարգսյան» ԱՁ | 2448000 | 2448000 |
| | | «ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 2948000 | 3537600 |
| | | «Մեգաօֆիս» ՍՊԸ | 3666700 | 4400040 |
| | | «ՀԵՆՐԻ-ՇԻՆ» ՍՊԸ | 5330000 | 6396000 |
| | | Ա/Ձ Սարգիս Ալոյան Մանվելի | 5333000 | 6399600 |
| | | «Օլանդա» ՍՊԸ | 5333333 | 6399999 |
| | | Ա/Ձ Արման Առաքելյան | 6400000 | 7680000 |
| | | «ՈՐՈՏ» ՍՊԸ | 6400000 | 7680000 |
| | | «Հ.Սմբատ» ՍՊԸ | 10000000 | 10000000 |
| | | Ա/Ձ Արման Առաքելյան | 300000000 | 360000000 |

**5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

5.1 Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո՝ 2024թ հունվարի 15-ին, ժամը 12.00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.09.2024թ. ժամը 12:00-ին**

**6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.**

6.1 «Արգավանդ Կաhույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

6.2 «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, իսկ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

**7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.2 կետում արձանագրված անհամապատասխանությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակիցների կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 17.01.20234թ. ժամը 12:00-ին**

**Բացակայող անդամ՝** Աստղիկ Մարաբյան

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

8.1 «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:***

**9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

**9.1** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել՝

1-ին չափաբաժնի մասով՝ **«Արգավանդ Կաhույք» ՍՊԸ-ին**

2-րդ չափաբաժնի մասով՝ **«Էքսիտո» ՍՊԸ-ին:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:***

**9.2** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել 1-ին չափաբաժնի մասով՝ «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի հայտը, 2-րդ չափաբաժնի մասով՝ «Մեգալոգ» ՍՊԸ-ի, «Մարիամ Սարգսյան» ԱՁ-ի, «Գոռսս Գրուպ» ՍՊԸ-ի, «Մեգաօֆիս» ՍՊԸ-ի, «ՀԵՆՐԻ-ՇԻՆ» ՍՊԸ-ի, Ա/Ձ Սարգիս Ալոյան Մանվելի և «Օլանդա» ՍՊԸ-ի հայտերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:***

**9.3** Արման Առաքելյան Ա/Ձ-ի, «Հ. Սմբատ» ՍՊԸ-ի և «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի հայտեր 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, «Գոռսս Գրուպ» ՍՊԸ-ի հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով և «Որոտ» ՍՊԸ-ի հայտը՝ 2-րդ չափաբաժնի մասով, մերժվել են հանձնաժողովի կողմից՝ գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:***

**10. Գնահատման արդյունքների մասին.**

**10.1** Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

______________ Նազիկ Հովսափյան /նախագահ/

______________ Տաթև Սուքիասյան

______________ Աննա Սիմոնյան /քարտուղար/